ՌԵԿՏՈՐԻ ԽՈՍՔ

Սիրելի՛ ուսանող, ի սրտե ողջունում եմ Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կրթություն ստանալու Ձեր որոշումը, քանզի վստահ եմ, որ Դուք այդ նպատակին հասել եք դպրոցում ստացած որակյալ կրթությամբ և այն շարունակելու հստակ տեսլականով:

Ստանձնելով տեխնոլոգիական լավագույն կրթության ապահովման բարդ ու պատասխանատու գործը՝ մեր համալսարանը, անտեսելով հակամարտող ու միջազգային ճանաչման ուղին բռնած երկրի դժվարությունները, կյանքի է կոչում կրթական բազմաթիվ ծրագրեր, որ մեր ուսանողները ստանան անհրաժեշտ գիտելիքներն ու դրանք շարունակ կատարելագործեն հաճելի և տրամադրող միջավայրում:

Ուզում եմ տեղեկացնել Ձեզ, որ Շուշիի տեխնոլոգիական համալսարանը խորացնում է գործընկերային կապերը հայաստանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ միևնույն ժամանակ բարեկամական նոր հարաբերությունների մեջ մտնելով արտասահմանյան առաջավոր համալսարանների հետ: Այս ամենի հիմքում մեկ նպատակ ունենք՝ անել ամեն ինչ, որ մեր շրջանավարտը լինի մրցունակ ու պահանջված ինչպես տեղի, այնպես էլ արտասահմանյան աշխատաշուկայում:

Հարգելի՛ ուսանող, մենք Արցախը շենացնելու, նրա անվտանգությունն օրեցօր ամրապնդելու իսկ քաղաքացիների համար կյանքի արժանապատիվ պայմանների ապահովման առաքելություն ունենք, որի կատարումը սկսվում է ուսումնական նստարանից: Վստահ եղեք, որ մեր նորաստեղծ համալսարանը կկայանա քայլ առ քայլ, որովհետև ցանկության դեպքում չկան չհաղթահարվող դժվարություններ, իսկ մենք այդ ցանկությամբ և վճռականությամբ են սկսել ու շարունակում մեր աշխատանքը:

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտոր, ճարտարապետության թեկնածու, դոցենտ **Նվեր Ալբերտի Միքայելյան**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Շուշիի տեխնոլոգիական համալսարանը կրթօջախ է, որն իրականացնում է կրթություն, հետազոտություն. նախագծային փորձագիտական աշխատանքներ և այլ ծառայություններ՝

- տեղեկատվական տեխնոլոգիաների,
- ճարտարապետության,
- շինարարության,
- գյուղատնտեսության,
- անասնաբուժության,
- փոխադրումների կազմակերպման,
- գյուղատնտեսության մեքենայացման,
- ագրոբիզնեսի բնագավառներում:

Շուշիի տեխնոլոգիական համալսարանն իրականացնում է ուսուցման եռաստիճան համակարգ, որն իրականացվում է բակալավրի, մագիստրոսի և հետբուհական մասնագիտական կրթության երրոդ աստիճանի ծրագրեր՝ համապատասխանաբար չորս, երկու և երեք տարի տևողությամբ: Համալսարանին կից նաև գործում է միջին մասնագիտական կրթության համակարգ՝ երեք տարի տևողությամբ: Ներկայումս Համալսարանում ուսանում են 1170 ուսանող:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

- **Ճարտարապետություն**

Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում

Էլեկտրաէներգետիկա

Ռադիոտեխնիկա և կապ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

❖ **Տեղեկատվական տեխնոլոգիաներ**

❖ **Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում**

- **Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ**

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

❖ **Ագրոբիզնես**

❖ **Պարենամթերքի տեխնոլոգիա**

Agրոնոմիա, սելեկցիա և գենետիկա

❖ **Անասնաբուժություն**

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համալսարանի ուսանողների իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի սովորողների ներքին կարգապահական կանոններում:

Ստորև համառոտ ներկայացվում են առավել կառևոր դրույթները:

1. **Համալսարանի սովորողներն իրավունք ունեն.**

- սեփական հայեցողությամբ, ըստ հակումների և հետաքրքրությունների, ընտրել մասնագիտություն, ուսուցման ձև, զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել մասնագիտական կրթությունը,
- ստանալ գիտության, տեխնիկայի և մշակույթի ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ, հաճախել Համալսարանում կարդացվող դասախոսություններին,
- մասնակցել իրենց կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները,
- մասնակցել ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից յուրացնել ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է Համալսարանում՝ ըստ սահմանված կարգի,
- ԱՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ընդգրկվել և մասնակցել Համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին,
- օգտվել Համալսարանի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, ուսումնաարտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,
- ծանոթանալ սույն կանոններին և նորմատիվային այլ փաստաթղթերին, կնքել պայմանագիր Համալսարանի հետ ուսումնառության պայմանների վերաբերյալ,
- ըստ նախասիրությունների մասնակցել Համալսարանում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին,
- ընդգրկվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում,
- բողոքարկել Համալսարանի ռեկտորի, պրոռեկտորների և ստորաբաժանումների ղեկավարների հրամաններն ու կարգադրությունները՝ ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- օգտվել ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- ԱՀ օրենսդրությամբ և Համալսարանի կողմից սահմանված կարգով ստանալու պետական, անվանական նշանակված կրթաթոշակ,

- օգտվել ուսման տարեկան վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- ծանոթանալ Համալսարանի կանոնադրության և այլ իրավական փաստաթղթերի,
- լիազոր մարմնի սահմանած կարգով անհրաժեշտության դեպքում ստանալ ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով՝ համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու դեպքում,
- ուսուցման առկա ձևով ուսումնառության դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու անգամ գտնվել արձակուրդում՝ առնվազն յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ,
- սահմանված կարգով փոխադրվել մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները,
- ուսման բարձր առաջադիմության, հասարակական ակտիվության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալ բարոյական և նյութական խրախուսանք՝ ԱՀ օրենսդրությամբ և Համալսարանի սահմանած կարգով,
- սահմանված կարգով ընտրել և ընտրվել Համալսարանի կառավարման համապատասխան մարմիններում և մասնակցելու այդ մարմինների աշխատանքներին.
- համալսարանի սովորողներն ունեն ԱՀ օրենսդրությամբ և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ,
- կրթությունն ընդհատած նախկին սովորողն ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի վերականգնվել Համալսարանում, բացի առաջին կուրսի 1-ին կիսամյակից,
- մասնակցել ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեությունը,
- հանրակացարանի կարիք ունենալու դեպքում սահմանված կարգով ստանալ տեղ հանրակացարանում,
- համալսարանում սահմանված կարգով տեղափոխվել նախասիրած մասնագիտություն, իսկ ԱՀ կառավարության կողմից սահմանված կարգով տեղափոխվել այլ բուհ՝ ներառյալ արտասահմանյան:

2. **Համալսարանի սովորողները պարտավոր են.**

- պարտադիր հաճախել դասախոսություններին, լաբորատոր ու գործնական պարապմունքներին, սահմանված ժամկետներում կատարել ուսումնական պլանով և ծրագրերով նախատեսված բոլոր տեսակի առաջադրանքները,
- տիրապետել բարձր որակավորում ունեցող ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին,
- անշեղորեն կատարել Համալսարանի կանոնադրության, Համալսարանի ներքին կարգապահական կանոնների, Համալսարանի էթիկայի և վարքագծի կանոնների, ներքին իրավական մյուս ակտերի պահանջները,
- հաճախել ուսումնական ծրագրերով նախատեսված դասընթացներին,

- հոգատար վերաբերվել Համալսարանի գույքին,
- բարձր պահել Համալսարանի պատիվն ու հեղինակությունը, պահպանել հասարակական համակեցության և բարոյականության նորմերը,
- լինել կարգապահ, Համալսարանի բոլոր ուսումնական, ուսումնաարտադրական և այլ կառույցներում պահպանել մաքրություն,
- համալսարանում իրեն պահել արժանավայել՝ հետևելով հասարակական համակեցության կանոններին,
- հարգել աշխատակիցների և սովորողների իրավունքներն ու ազատությունները, անձի արժանապատվությունը,
- թույլ չտալ Համալսարանի սովորողին անվայել արարք, հոգալ Համալսարանի հեղինակության մասին ինչպես ուսման վայրում, այնպես էլ առօրյա կյանքում,
- կրել լիակատար նյութական պատասխանատվություն իր մեղքով Համալսարանին նյութական վնաս պատճառելու դեպքում,
- դասասկզբից 10 րոպեից ավելի դասախոսի չներկայանալու դեպքում ուսանողները խմբի ավագի միջոցով պարտավոր են այդ մասին հայտնել համապատասխան ֆակուլտետի դեկանատ:

3. **Վճարովի հիմունքներով կրթություն ստացող սովորողները պարտավոր են.**

- սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձավճարը: Ուսման վարձավճարը ժամանակին չվճարելու դեպքում այդ ուսանողները կարող են հեռացվել Համալսարանից,
- կատարել Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, Համալսարանի այլ ներքին իրավական ակտերով և ուսումնառության պայմանների վերաբերյալ կնքված պայմանագրով նախատեսված պարտականությունները:

4. Պարապմունքներին չներկայանալու դեպքում սովորողը պարտավոր է չներկայացած օրվանից սկսած երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնել համապատասխան ֆակուլտետի դեկանին, իսկ Համալսարան հաճախելու առաջին իսկ օրը ներկայացնել փաստաթղթեր կամ բացատրագիր պարապմունքներին չմասնակցելու պատճառների մասին:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ

1.Օրինակելի վարքի, առաջադիմության և Համալսարանի հասարակական կյանքին ակտիվ մասնակցելու համար սահմանվում են սովորողների խրախուսման հետևյալ միջոցները.

- շնորհակալության հայտարարում,
- միանվագ դրամական պարգևատրում,
- պատվոգրի հանձնում,
- շնորհակալագրի հանձնում,
- հուշանվերի հանձնում,
- կարգապահական տույժի հանում:

5. Կարգապահության, ներքին կարգ ու կանոնի խախտման դեպքերում սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ տույժերը.

- զգուշացում,
- նկատողություն,
- խիստ նկատողություն,
- մասամբ կամ ամբողջովին կրթաթոշակից զրկում,
- հեռացում Համալսարանից:

6. Սովորողը կարող է հեռացվել Համալսարանից.

- ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում,
- պայմանագրով սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում,
- համալսարանի ներքին կարգապահական կանոնները կոպիտ կերպով խախտելու դեպքում՝ ուսխորհրդի ներկայացմամբ և ռեկտորատի որոշմամբ,

7. Չի թույլատրվում ուսանողին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

8. Սովորողը կարող է ազատվել Համալսարանից.

- իր դիմումի համաձայն,
- այլ բարձրագույն ուսումնական հաստատություն տեղափոխվելու դեպքում,

9. Համալսարանից սովորողը չի կարող ազատվել, եթե նա ենթակա է հեռացման:

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

Կրեդիտային համակարգը Եվրոպայում լայն կիրառություն է ստացել հատկապես վերջին տասնամյակում՝ Կրեդիտների կուտակման և փոխանցման համաեվրոպական համակարգի (ECTS) ստեղծման արդյունքում: Յուրաքանչյուր դասընթացին շնորհվում է համապատասխան կրեդիտ: Ըստ կրեդիտների փոխանցման և կուտակման միասնական համաեվրոպական համակարգի՝ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը 1 ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ, իսկ ամբողջ ուսումնառության գումարային կրեդիտների քանակը՝ 240 ECTS կրեդիտ:

Դա նախատեսված է եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքերի արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը դյուրացնելու նպատակով: Կրթական ծրագրի բոլոր դասընթացների համար սահմանվում են կրեդիտներ, որոնք արտահայտում են ուսանողին ներկայացվող լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքի ուսումնական լրիվ բեռնվածությունը: Ուսանողը վաստակում է սահմանված կրեդիտը համապատասխան դասընթացը հաջողությամբ յուրացնելու և գնահատականի դրական շեմ ապահովելու դեպքում:

Կրեդիտը չի փոխարինում թվանշանով գնահատումը, և վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում ըստ ստացած թվանշանների: Կրեդիտային և գհանատման համակարգերի միջև փոխներգործության որևէ կապ չկա:

Կրեդիտային համակարգն ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ որակավորման համապատասխան աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

- ✓ Կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաշեժտ քանակը:
- ✓ Կրեդիտներ են ամրագրվում կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, փորձուսուցմանը, ավարտական աշխատանքին և այլն:

(ECTS) կրեդիտը համարժեք է 30 ժամյա (լսարանային, արտալսարանային և ինքունուրույն) ուսումնական բեռնվածությանը:

Տարեկան ուսումնական գործընթացը կազմակերպվում է ըստ երկու՝ աշնանային և գարնանային կիսամյակների: Ուսումնական պարապմունքները յուրաքանչյուր կիսամյակում իրականացվում են 16 շաբաթ տևողությամբ, և չորսական շաբաթ տրվում է քննություններին:

Ըստ գործող կարգի՝ բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական բեռնվածությունը կարող է կազմել 22-30 ժամ:

ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Պրակտիկայի բովանդակությունն ու տևողությունը սահմանվում են համապատասխան պետական կրթական չափորոշիչներով և Համալսարանի ուսումնական պլաններով:

Պրակտիկայի կազմակերպումն ուղղված է ուսանողների մասնագիտական գործունեության տիրապետմանը, որակավորման անընդհատ և հետևողական բարձրացմանը:

Համալսարանում գործում են պրակտիկաների հետևյալ տեսակները.

- ուսումնական,
- արտադրական,
- նախաավարտական կամ նախադիպլոմային:

Պրակտիկայի կազմակերպումն իրականացվում է հետևյալ կերպ.

- պրակտիկայի բոլոր փուլերի ծավալն ու բովանդակությունը սահմանվում է պրակտիկայի ծրագրով, որը մշակվում է համապատասխան առարկայական /ցիկլային/ հանձնաժողովներում և հաստատվում Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով ռեկտորի տեղակալի կողմից:
- ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել Համալսարանի ստորաբաժանումներում:
- կազմակերպությունում պրակտիկան իրականացվում է երկու կողմերի միջև կնքված համապատասխան պայմանագրով, համաձայն որի կազմակերպությունը պարտավորվում է տեղում կազմակերպել ուսանողների պրակտիկան: Պայմանագրում ամրագրվում են պրակտիկանտ – ուսանողների համար պայմաններ ու հնարավորություններ պրակտիկայի ծրագրով նախատեսված առաջադրանքների կատարման համար: Նշվում են անվտանգության տեխնիկայի և ներքին կարգապահական կանոնների հետ ուսանողների ծանոթացման պայմանները:
- կազմակերպությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ու աջակցում Համալսարանի ուսանողներին, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների գործընթացը լիարժեք կազմակերպելու համար: Ուսանողներին և դասախոսներին թույլատրվում է օգտվել կազմակերպության լաբորատոր սարքավորումներից, տեխնիկական փաստաթղթերից՝ անհատական առաջադրանքների ու պրակտիկայի ծրագրի լիարժեք կատարման նպատակով:
- պրակտիկայի անցկացման ժամկետները սահմանվում են Համալսարանի կողմից՝ համաձայն ուսումնական պլանների:
- պրակտիկայի արդյունքում, սահմանված ժամկետի ավարտին, ուսանողը Համալսարանի կողմից նշանակված ղեկավարին ներկայացնում է օրագիր-հաշվետվություն:
- պրակտիկայի գնահատականը համահավասար է տեսական ուսուցման գնահատականին և հաշվի է առնվում ուսանողների առաջադիմության ընդհանուր արդյունքների անփոփման ժամանակ:
- Համալսարանի կողմից պրակտիկայի ղեկավար նշանակվում են արտադրությանը լավատեղյակ, փորձառու դասախոսներ, իսկ կազմակերպության կողմից՝ հմուտ մասնագետներ:

ՀՀՊ ԳՅՈՒՂԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՄ
ФОНД СОДЕЙСТВИЯ СЕЛУ И СЕЛЬСКОМУ ХОЗЯЙСТВУ НКР
SUPPORT FUND OF VILLAGE AND AGRICULTURE OF THE RNK

ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ԲՆԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳԾՈՎ)

2016թ.-ին նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Շուշիի տեխնոլոգիական համալսարանը հիմնադրել է բնագիտական տեխնոլոգիաների լաբորոտորիա:

Ուսումնափորձնական լաբորատորիայի նպատակներ են՝ Շուշիի տեխնոլոգիական համալսարանում բարձրացնել ուսանողների բնագիտական գիտելիքները և դրա արդյունքում զարգացնել բնագիտական ոաուումնասիրություններն Արցախում, հաշվի առնելով Արցախի բնական ռեսուրսները՝ այն է բուսական աշխարհը, հատապտուղները, ինչպես նաև նոր բուսատեսակների մշակումը: Այդ նպատակով ձեռք են բերվել լաբորատոր սարքավորումներ՝ Համալսարանի հնարավորությունների սահմաններում և այլ նյութատեխնիկական միջոցներ:

Լաբորոտորիայի ստեղծման հիմնական նպատակն է Արցախում աճող դեղաբույսերից եթերայուղերի, ինչպես նաև սերմնայուղերի և պտղայուղերի ստացումը: Բոլոր թվարկված յուղերը նպատակային են, ինչը նշանակում է, որ դրանք պետք է դառնային հիմք ինչպես մի շարք դեղամիջոցների, այնպես էլ՝ մաշկի խնամքի միջոցների, ատամի մածուկների ստեղծման համար: Մշակվեց եթերայուղերի ստացման համընդհանուր նոր տեխնոլոգիա, ինչի արդյունքում ստացվեց մեխակի, ուրցի, դափնու, դաղձի, համեմի, նեխուրի, մաղադանոսի, կենսածառի, ակացիայի, երեք տարբեր տեսակի օշինդրների եթերայուղեր և այլն: Մշակվեց համընդհանուր տեխնոլոգիա չիչխանի, մասուրի պտղայուղերի, համեմի, նեխուրի, մաղադանոսի, ակացիայի, չիչխանի, մասուրի, հոնի, ծիրանի, դեղձի, հավակատարի(ամարանտ), ընկույզի, նռան սերմանյուղերի ստացման համար:

Ստացված տարբեր յուղերի հիմքի վրա մշակվել են 20 նոր դեղամիջոցների տեխնոլոգիաներ: Պատրաստվել են նմուշներ, 4 դեղամիջոցներ մեղուների բուժման համար, 1 դեղամիջոց արյունածուծ միջատների դեմ, 10 և ավելի մաշկի խնամքի միջոցներ, 4 տեսակի ատամի մածուկ, և այլն:

Առաջին անգամ Արցախում մեր նախաձեռնությամբ մշակվեց գետնանուշ, որից ստացանք յուղ, իսկ մնացորդը օգտագործվեց հալվաների, մածուկների պատրաստման համար:

Մեր լաբորատորիայում կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքում պատրաստվել և ներկայացվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալություն հայտեր՝ գյուտերի և օգտակար մոդելների ստացման ակնկալիքով: Արդյունքում ստացվել է 20 արտոնագիր իսկ 2022թ-ին ավելացել է 11 արտոնագիր:

Գիտահետազոտական աշխատանքները շարունակվում են՝ ընդգրկելով նոր բույսեր և մշակման նոր տեխնոլոգիաներ:

Բոլոր նշված արտոնագրերում հեղինակները հիմնականում մեր համալսարանի աշխատակիցներն են և ուսանողները: Գիտահետազոտական աշխատանքների արդյունքում պատրաստվել են բակալավրային ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Համալսարանի ուսանողական խորհուրդն ուսանողության խնդիրներով զբաղվող ինքնակառավարման մարմին է, որի գործունեությունը սահմանվում է ԱՀ օրենքներով և համալսարանի կանոնադրությամբ:

Ուսանողական խորհրդի նպատակներն են.

- ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանությունը,
- ռազմահայրենասիրական դաստիարակությունը,
- ուսումնակրթական և գիտական ոլորտներում աշխատանքների ծավալումը,
- ուսանողների ազատ ժամանցի կազմակերպումը,
- հանրապետական միջոցառումների կազմակերպումը,
- ուսանողներին տեղեկատվությամբ ապահովումը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՇՏՀ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերություն(ՈՒԳԸ): Ընկերության հիմնական նպատակն է աջակցել ուսանողների գիտական, կրթական և հոգևոր զարգացմանը:

Ուսանողական գիտական ընկերության խնդիրներն են.

- աջակցել ուսանողների, երիտասարդ գիտաշխատողների և հետազոտողների գիտահետազոտական աշխատանքների իրականացման և ներդրման գործընթացին,
- ստեղծագործական ներուժի լիարժեք իրականացման համար համախմբել երիտասարդ գիտաշխատողների, դասախոսների, հետազոտողների, հայցորդների և ուսանողների գիտահետազոտական գործունեությունը,
- երիտասարդ գիտաշխատողների և մասնագետների համար ստեղծել բարենպաստ միջավայր,
- երիտասարդների շրջանում քարոզել գիտական արժեքները, կազմակերպել գիտահետազոտական փորձի փոխանակման միջոցառումներ:

Ընկերությունն ունի կենտրոնական խորհուրդ և ֆակուլտետների խորհուրդներ՝ յուրաքանչյուրն իր գիտական ղեկավարով: Ամեն տարի կազմակերպում է ուսանողական գիտական նստաշրջան, որտեղ զեկուցումներով հանդես են գալիս ՇՏՀ-ի ուսանողները:

ՈՒԳԸ նստաշրջաններին մասնակցությունն ուսանողներին հնարավորություն է տալիս խորացնելու իրենց մասնագիտական գիտելիքները, զարգացնելու վերլուծական միտքը և փորձ ձեռք բերելու ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու ու դրանց արդյունքները ներկայացնելու գործում:

LEADERS

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գործունեությունը թափանցիկ է, և առկա են հանրության հետ հետադարձ կապի ամուր մեխանիզմներ: Գործում է համալսարանի պաշտոնական կայքը՝shushi-tech.com հասցեով, որտեղ հրապարակվում են բուհի բոլոր կարևոր փաստաթղթերը, տարեկան գործունեության մասին հաշվետվությունները, կարգերը, որոշումները: Օպերատիվ ձևով լուսաբանվում են բուհական կյանքը, ստորաբաժանումների աշխատանքը, ուսանողական անցուդարձը: Զուգահեռ սպասարկվում է նաև բուհի պաշտոնական էջը Facebook սոցիալական ցանցում, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/shushtech/:

Հանրային կապերի զարգացումը ևս տեսադաշտում է.ՇՏՀ պաշտոնական կայքում առկա են զանգվածային լրատվամիջոցների բազմաթիվ անդրադարձներ համալսարանի գործունեության և հաջողությունների մասին:

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Վճարովի համակարգի ուսանողների ուսման վարձավճարները վճարվում են կիսամյակի կտրվածքով՝ մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

Ուսման վարձերի գանձման համար ՇՏՀ գործում է հետևյալ դրամային հաշվեհամարը.

«**Հայբիզնեսբանկ**»**ՓԲԸ հ/հ 1500725986059**

Վճարման հանձնարարականի նպատակ դաշտում անհրաժեշտ է լրացնել.

1.ուսումնական տարի, կիսամյակ

2.ֆակուլտետը,մասնագիտությունը, կուրսը

3.ուսանողի անունը, ազգանունը, հայրանունը

4.գումարի չափը